ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՇՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՄՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ ՈՐ Ի ԲԸՐԲԵՆԿ, ԱՄՆ

Սիրելի՛ Սրբազան,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները յղել Ձեզ քահանայական ձեռնադրութեան 30-րդ եւ եպիսկոպոսական օծման 20-րդ տարեդարձերի առիթով:

Ձեր ծնողաց հոգածու խնամքով կրթուելով ու դաստիարակուելով մեր ազգային ու հոգեւոր արժէքներով, Դուք երիտասարդ հասակից ընտրեցիք եկեղեցական ծառայութեան ասպարէզը՝ Ձեր կեանքն ընդմիշտ կապելով մեր Եկեղեցու եւ Սուրբ Էջմիածնի առաքելութեանը:

Բարձրեալի օրհնութեամբ արժանանալով քահանայութեան բարձր կոչման, Ձեր սպասաւորութիւնը սկսեցիք մեր ժողովրդի կեանքում՝ մարմնաւորելու հոգեւորականի Ձեր տեսիլքներն ու երազները: Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ հովուական ծառայութեան կոչուեցիք Կանադահայոց նորակազմ թեմում՝ ջանքեր բերելով հայորդեաց հոգեւոր կեանքի պայծառութեանն ու Կանադայում թեմական կառոյցների զօրացման աշխատանքներին: Այնուհետեւ ստանձնելով թեմակալ առաջնորդի պաշտօնը եւ արժանանալով Եպիսկոպոսութեան սուրբ օծման՝ Դուք աւելի քան մէկ տասնամեակ առաջնորդեցիք մեր Եկեղեցու առաքելութիւնը կանադահայութեան կեանքում՝ արձանագրելով բազում յաջողութիւններ:

Սիրելի՛ Սրբազան, հոգեւոր ու վարչական ծառայութիւնների մէջ տարիների ընթացքին ամբարած փորձառութիւնը Դուք այսօր արդիւնաւորապէս ի սպաս էք դնում Սփիւռքի մեր մեծագոյն թեմերից մէկի՝ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի շինութեանն ու պայծառութեանը՝ 2003 թուականից վարելով թեմակալ առաջնորդի պատասխանատու պաշտօնը: Հաւատարիմ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Ձեր ուխտին՝ Դուք արթուն հովիւ ու նուիրեալ սպասաւոր էք Ձեզ վստահեալ հօտի համար, անձնական օրինակով, խօսքով ու գործով հաւատացեալ հայորդեաց կեանքից ներս յաւելելով հաւատ ու յոյս, ազգասիրութիւն ու եկեղեցասիրութիւն:

Ձեր հոգու անկեղծ սէրը հանդէպ Սուրբ Էջմիածինը, որ տասնամեակներ առաջ Ձեզ բերեց Հայրենիք, այսօր արտայայտուում է մայրավանքի եւ հայաստանեան թեմերի շինութեանն ու պայծառութեանը աւանդ բերելու նախանձախնդրութեամբ: Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, որ Ձեր քաջալերութեամբ բազմաթիւ հայորդիներ աջակցութիւն են բերում Մայր Աթոռի ատրուածադիր

առաքելութեան իրականացմանը եւ Հայրենի մեր Երկրում հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Այսօր Ձեր յոբելեանների առիթով ուրախ ենք նշելու, որ Ձեր կեանքի ապրուածաշնորհ փարիները Դուք իմաստաւորել էք Բարձրեալ Աստծուն, մեր Եկեղեցուն ու ժողովրդին մատուցած անսակարկ ծառայութեամբ:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի սրտէ աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ մաղթելով Ձեզ Տիրոջ օրհնութեամբ բազմարդիւն քահանայագործութեան նորանոր յոբելեաններ: Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած աջակից լինի Ձեզ պատասխանատու Ձեր ծառայութեան մէջ՝ ի շինութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ԱՄՆ Հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի եւ ի բարօրութիւն ապրուածասէր մեր ժողովրդի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 26-ն Մայիսի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1044